Q 8.2.1-01

«ՀԱՅՍԵՐՏ» ՍՊԸ-ի ՍՄ քաղաքականությունը

Արտադրանքի սերտիֆիկացման մարմինը հիմնվել է «ՀԱՅՍԵՐՏ» ՍՊԸ կողմից՝ հայտատուներին արտադրանքի համապատասխանության գնահատման բնագավառում ծառայություններ մատուցելու նպատակով: Մեր հիմնական նպատակն է՝ *համապատասխանության գնահատման ծառայություններն իրականացնել որակի ամենախիստ չափանիշներին համապատասխան և ապահովել շահագրգիռ կողմերի վստահությունը համապատասխանության գնահատման գործընթացի կազմակերպման և դրա արդյունքների նկատմամբ*:

Մենք գիտակցում ենք, որ հիմնական նպատակին հասնելու համար սերտիֆիկացման մարմնի անձնակազմը պետք է աշխատի որպես միասնական թիմ, իր գործունեության մեջ կարևորելով՝

- հայտատուների բավարարվածության ապահովումը,
- անկողմնակալության, պատասխանատվության, գաղտնիության, թափանցիկության, արհեստավարժության, անկախության, անխտրականության, բողոքներին արագ արձագանքման սկզբունքը,
- համապատասխանության գնահատման լավագույն փորձի, ժամանակակից մոտեցումների և մեթոդաբանության կիրառումը,
- աշխատողների մասնագիտական ունակությունների անընդհատ կատարելագործումը:

Սույն քաղաքականության և հիմնական նպատակի իրագործման համար «ՀԱՅՍԵՐՏ» ՍՊԸ-ի սերտիֆիկացման մարմնի ղեկավարությունը իր բոլոր աշխատողների անունից պարտավորվում է՝

1. Ապահովել բոլոր հայտատուների համար արտադրանքի համապատասխանության գնահատման գործընթացների թափանցիկությունը,
2. Ապահովել արտադրանքի համապատասխանության գնահատման աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը բոլոր հայտատուների համար,
3. Բացառել սերտիֆիկացման մարմնի և դրա փորձագետների՝ հայտատուների հետ առևտրային ընդհանուր շահերի առկայության դեպքերը, ապահովել արտադրանքի սերտիֆիկացման վերաբերյալ որոշումների անկախությունը և անակողմնակալությունը,
4. Բացառել սերտիֆիկացման մարմնի գործունեության մեջ խտրականության դեպքերը,
5. Ապահովել սերտիֆիկացման մարմնի գործառնության համապատասխանությունը ՀՀ հավատարմագրման և համապատասխանության գնահատման ոլորտի օրենսդրության պահանջներին, ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17065-2013 ստանդարտի, ինչպես նաև միջազգային լավագույն գործելակերպերի պահանջներին,
6. Անընդհատ բարձրացնել արտադրանքի սերտիֆիկացման մարմնի կողմից մատուցվող ծառայությունների մրցունակությունը,
7. Պարբերաբար ուսումնասիրել հայտատուների սպասումները, վերլուծել հնարավոր ռիսկերը, հատկացնել սերտիֆիկացման մարմնի անկողմնակալ, թափանցիկ և արհեստավարժ գործառնության համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ,
8. Սահմանել յուրաքանչյուր աշխատողի համար պատասխանատվությունը և մշտապես բարձրացնել անձնակազմի մասնագիտական գիտելիքների մակարդակը,
9. Ստեղծել անվտանգ աշխատանքային պայմաններ և ապահովել արտադրանքի սերտիֆիկացման համար անհրաժեշտ նորմատիվատեխնիկական բազա,
10. Վերահսկել կառավարման համակարգի գործընթացների արդյունավետությունը, ժամանակին նախաձեռնել ուղղիչ և կանխարգելիչ գործողություններ:

«ՀԱՅՍԵՐՏ» ՍՊԸ-ի արտադրանքի սերտիֆիկացման մարմնի ղեկավարությունը պատասխանատվություն է կրում սույն քաղաքականության իրագործման համար և պարտավորվում է ապահովել դրա դրույթների ընկալումը ու իրագործումը Մարմնի ամբողջ անձնակազմի կողմից:

Հաստատեց՝

«ՀԱՅՍԵՐՏ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Մ. Նուրբեկյան

10 հունիս 2024թ.